ԱՐՍԵՆ ՏԵՐՏԵՐՅԱՆ

(Ծննդյան 100-ամյակի առթիվ)

Լեռնային Ղարաբաղի Շուշիքենդ գյուղը 19-րդ դարավերջին բնորոշվում էր նահապետական նիստուկացով, անթափանց հետամնացությամբ, որը հիանալի պայմաններ էր ստեղծում անողոք շահագործման համար։ Այնտեղ էր, որ 1882 թ. դեկտեմբերին, մանր առևտրական Հարությունի ոչ բազմանդամ ընտանիքում աշխարհ եկավ նրա որդին, որը ի հավերժացումն պապի, ժառանգեց նրա Արսեն անունը։

Արհեստը չէր մեռցրել Հարությունի մեջ սերը դեպի «գիրն ու ղալամը», ուստի նա Արսենին ուղարկում է Շուշու թեմական դպրոց՝ նախնական ուսումնառության։ Ի բնե աշխույժ ու աչքաբաց Արսենը փայլուն ցուցանիշներով ավարտում է թեմական դպրոցը և 1902 թ. սկսում է հաճախել Էջմիածնի Գևորգյան ճեմարանի լսարանական բաժինը։ Այստեղ էլ ճեմարանական Արսեն Տերտերյանն աչքի է ընկնում իր բացառիկ կարողություններով, այստեղ էլ նրա անվան դիմաց դասամատյանում փայլում են «հույժ գովելի» կամ «գովելի» նիշերը։ 1905 թ. ավարտելով Գևորգյան ճեմարանը, Արսեն Տերտերյանը աշխատանքի է անցնում Շուշի քաղաքի հիշյալ թեմական դպրոցում, որպես մայրենի գրականություն առարկայի ուսուցիչ։ Այս էր զարգացման այն հնարավոր բարձրակետը, որին նախասովետական շրջանում կարող էր հասնել թեկուզ ամենաօժտված անհատը. այս էր, ի դեպ, այն ապագան, որ իր որդու՝ Արսենի համար երազում ու փայփայում էր հայրը։ Բայց այսքան չէին և այս չէին Տերտերյանի ձգտումները, նրա սպասելիքներն ու ցանկությունները։ ՈՒսուցչական գործունեությանը համատեղ նա համառորեն սկսում է զբաղվել ինքնակրթությամբ, հմտանում է ռուսերեն ու գերմաներեն լեզուների մեջ, կարդում է հայ և համաշխարհային գրականության խոշորագույն ներկայացուցիչների ստեղծագործությունները։ 1909 թ. Երևանի Հայկական սեմինարիայի հրավերով Տերտերյանը տեղափոխվում է քաղաք և սկսում է աշխատել հիշյալ սեմինարիայում որպես գրականության ուսուցիչ։

Սեմինարիայում աշխատելու տարիները՝ 1909-1920թթ. Տերտերյան-քննադատի ձևավորման ու կազմակերպման տարիները հանդիսացան։ Նա շարունակում էր անհագ

կերպով պարապել, վերջնականապես հմտանալով ռուսերեն և գերմաներեն լեզուների մեջ։ Կարդաց ու կոնսպեկտավորեց համաշխարհային փիլիսոփայական մտքի գրեթե բոլոր նշանավոր ներկայացուցիչներին, հիմնավորապես ուսումնասիրեց ռուսական, գերմանական, ֆրանսիական և անգլիական գրականությունները։ Այդ ամենը յուրացրեց այնպես, որ միս ու արյուն դարձավ նրա համար։ Խորամուխ եղավ սոցիալիստական ուսմունքների մեջ, կարդաց ու վերակարդաց Մարքսի, Էնգելսի, Լենինի աշխատությունները, վերահասու եղավ նոր ու ազատ հասարակություն կառուցելու նրանց վեհ գաղափարներին։ Իսկ դա պետք էր անել, որովհետև աշխարհ էր եկել 1917 հրաշունչ թվականը, հետևաբար անհրաժեշտ էր կողմնորոշվել ամբողջ աշխարհին ու Ռուսաստանն ալեկոծող մեծամեծ դեպքերի օվկիանոսում։ Անհրաժեշտ էր տարբերել կարողանալ ժողովրդի համար պայքարող և ժողովրդի համար պայքարել ձևացնող կուսակցությունները, անհրաժեշտ էր, վերջապես, կարողանալ տեսնել, թե որտեղից է գալիս բազմաչարչար հայության փրկության արշալույսը։ Եվ, ի պատիվ Արսեն Տերտերյանի, պետք է ասել, որ նա չունեցավ մտավորական տատանումների «նախ՝ հեռվից դիտելու», «տեսնելու՝ նոր համոզվելու» այն էտապը, որն այնքան բնորոշ էր մշակութային ներկայացուցիչներից շատերին։ Զգալի դեր կատարեցին, այս առումով, Լենինի աշխատություններին ծանոթանալը, որոնցից «Պետություն և հեղափոխություն», «Պրոլետարական հեղափոխություն և ռենեգատ Կաուցկին», «Կոմունիստական ինտերնացիոնալ» և այլ գործերը Տերտերյանի հայերեն թարգմանությամբ հետագայում լույս ընծայվեցին։

1920 թվականը նոր դեպքեր ու իրադարձություններ բերեց շնչահեղձ լինող հայ ժողովրդի համար։ Դադարեցին արյունահեղ, եղբայրասպան պատերազմները և Հայաստանում ստեղծվեց Սովետական իշխանություն։ Հայաստանի բոլշևիկյան կառավարությունը իր ամբողջ ուժով ձեռնամուխ եղավ հին, ցավագին կերպով քայքայված, նահապետականորեն հետամնաց Հայաստանը վերափոխելու տիտանական աշխատանքին։ Դրա առաջին ապացույցներից մեկը Երևանում Հայկական Պետական Համալսարան կազմակերպելու բարդ ու աշխատատար գործն էր, որը, սակայն, անհաղթահարելի թվացող դժվարություններով հանդերձ, ի վերջո, հնարավոր եղավ

գլուխ բերել։ Հայաստանի Կենտրոնական կոմիտեն նամակով դիմեց Արսեն Տերտերյանին՝ խնդրելով նրա համաձայնությունը Համալսարանում դասախոսելու համար։ Տերտերյանն, իհարկե, սիրով համաձայնվեց, և 1920 թվականի դեկտեմբերից համալսարանի մանկավարժական ֆակուլտետում սկսեց դասախոսել հայ գրականություն առարկան։

Աշխատանքը շատ էր, անելիքն ու կատարելիքը՝ առավել քան։ Անհրաժեշտ էր հնարավորինս կարճ ժամանակամիջոցում պատրաստել հայագիտական ու մանկավարժական հմուտ կադրեր, որոնք կարողանային նոր ոգով կրթել աճող սերնդին։ Հարկավոր էր դրանցից առավել օժտվածներին առաջ քաշել գրականության, գրականության տեսության, մամուլի պատմության ասպարեզ, գրականագիտական-հասարակագիտական կադրեր պատրաստելու՝ սովետական նորաստեղծ գրականությունն ու գրականագիտությունը հուսալի դիրքերում դնելու համար։ Տասնյակից ավելի հայ դասական հեղինակներ կային, որոնց մասին կամ ընդհանրապես ոչինչ չէր ասվել, կամ հապճեպորեն թխվել էին հակագիտական, պարզապես սխալ կարծիքներ, որոնք վերջնական խոսք լինելու հավակնությունն ունեին։ Դրանք անհրաժեշտ էր հերքել ու ինչպես հարկն է վեր հանել տվյալ գրողին։ Անհրաժեշտ էր, վերջապես, ստեղծել հայ գրականության սիստեմատիկ ու գիտական դասընթաց՝ նորերին ճշգրիտ ուղով դաստիարակելու համար, որովհետև հրապարակում եղած Լեոյի, Պալասանյանի, Գարագաշյանի դասընթացները ոչ միայն անընդունելի էին ու հակագիտական, այլև տառապում էին մեթոդոլոգիական բնույթի մի շաք սխալներով։ Ինչպես տեսնում ենք՝ անելիքն իրոք շատ էր, և Տերտերյանը երիտասարդական ավյունով ձեռնամուխ է լինում այդ մեծ ծրագրերի իրականացման գործին։

Իր անսպառ գիտելիքներին հաղորդակից անելով ուսանողությանը, նա միաժամանակ շարունակում էր հանդես գալ նորանոր հայագիտական-գրականագիտական աշխատություններով, որոնցից յուրաքանչյուրը նշանակալից ներդրում էր հայագիտության ոսկե ֆոնդում։ Եթե չհաշվենք Տերտերյանի գրական երախայրիքը՝ «Վահան Տերյանի գրական գործունեությունը» աշխատությունը, որը սկսնակի անփորձությունն ու հապճեպությունն ուներ, ապա 1910 թվականին

հրատարակված «Միքայել Նալբանդյան» ծավալուն ուսումնասիրությունը արդեն վկայում է հեղինակի վառ արտահայտված գրականագիտական կարողությունների մասին։ Այս աշխատության մեջ նա Նալբանդյանին ներկայացրեց իբրև ազգային մեծ հրապարակախոս, ազգ ասելով՝ հասկանալով ամբողջ հայ ժողովուրդը և ոչ թե նրա մի բուռ ընտրյալները։ Հստակորեն բացահայտվեց Նալբանդյանի հրապարակախոսական վիթխարի գործունեությունը և ցույց տրվեց, որ այն մինչև վերջ ծառայել է դեմոկրատական շարժման նպատակներին։ Տերտերյանն առաջին անգամ վեր հանեց Նալբանդյանին իբրև հեղափոխական-դեմոկրատ, ցույց տվեց նրա կապերը Գերցենի, Օգարևի, Բակունինի և ռուսական այլ առաջավոր մտածողների հետ։

Էլ ավելի ուշագրավ է 1912 թվականին հրատարակված «Հովհաննես Թումանյան» ուսումնասիրությունը։ Բանն այն էր, որ նսեմացելով կամ պարզապես չհասկանալով Թումանյանին, նրան հայտարարել էին սոսկ Լոռու գավառի բանաստեղծ, կամ, Լեոյի տերմինով ասած՝ «Լեռան երգիչ», «Հայրենի եզերքի բանաստեղծ» և այլն։ Այս տարօրինակ գնահատականը քաղաքացիական իրավունք էր ստացել այնպես, որ մտել էր նույնիսկ դասագրքերի և ուսումնական ձեռնարկների մեջ։ Տերտերյանն առաջին անգամ Թումանյանին ներկայացրեց որպես ազգային մեծ բանաստեղծ, ցույց տվեց, որ կան ընդհանրություններ Թումանյանի և Պուշկինի, Լերմոնտովի, Բայրոնի միջև։ Այդ ֆոնի վրա վեր հանելով Թումանյանին՝ Տերտերյանը ցույց տվեց նրա պոեզիայի համամարդկային բնույթը։ Վերլուծելով Թումանյանի արվեստի առանձնահատկությունները՝ Տերտերյանը տվեց գեղեցիկի, նրա դասակարգային պատկանելության, գեղագիտական զանազան դպրոցների այնպիսի խոր և գիտակ բնութագրություններ, որոնք առ այսօր հիացմունք են պատճառում։

Այս ժամանակաշրջանում հրատարակված Տերտերյանի մյուս աշխատությունները՝«Շիրվանզադեն որպես վիպագիր և դրամատուրգ», «Նար-Դոս», «Հովհաննես Հովհաննիսյան», «Մուրացանը որպես մտածող», «Ավետիք Արասխանյանը և նրա «Մուրճ»-ը», «Հայ գյուղացիական գրականությունը» և շատ ուրիշներ սովետահայ գրականագիտության հիմնաքարերը հանդիսացան։

1930 թ. մարտին, Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը Տերտերյանին շնորհում է պրոֆեսորի տիտղոս։ 1939թ. մայիսին նույն գիտական խորհուրդը, ի նկատի ունենալով Արսեն Տերտերյանի բացառիկ ծառայությունները հայ գրականության ասպարեզում, նրան առանց պաշտպանելու, շնորհում է բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան։ Մի տարի անց, 1940 թ., Պետական համալսարանում քսան տարի անբասիր ու անձնուրաց աշխատելու համար բանասիրական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Արսեն Տերտերյանին շնորհվում է Գիտության վաստակավոր գործչի պատվավոր տիտղոս։ Առանց հուզմունքի չի կարելի կարդալ նրա փոքրիկ ելույթը՝ ասված այդ հանդիսավորության ժամանակ, խոսք, որ ասես պատգամ է հաջորդներին։

«Հարգելի բարեկամներ։ Ես այն սերնդի ներկայացուցիչն եմ, որը տեսել է մահ, ավեր, կոտորած, ալան-թալան։ Տեսել է իր սիրելի ժողովրդի լլկումն ու անարգումն օտարի ձեռքով, թշնամու սրով։ Հասարակ, փոքրիկ դպրոցն անգամ աշխարհքից ավելի մեծ երազանք էր հայի համար։ Իսկ այսօր մենք համալսարան ունենք և համալսարանը մեծարում է ինձ՝ գյուղացու զավակիս, որ համալսարան երազում անգամ չէր կարող տեսնել։ Մի՞թե խոսքեր կան այս ամենը վերարտադրելու համար։ Եվ հաճախ ես մտորում եմ՝ ո՞վ արեց այս բոլորը։ Այդ հերկուլեսյան ուժ էր, որ այսպես վերիվար շրջեց երկիրը։ Հայրս կասեր. Աստվածն է, աղոթենք նրան։ Իսկ ինձ համար պարզ է, որ այդ արեցին կարմիր դրոշին զինվորագրված մարդիկ, այն դրոշին, որն իր վրա ունի Լենինի պատկերը։ ՈՒրեմն սրբությամբ պահեք-պահպանեք այդ դրոշը, և եթե պահանջի անհրաժեշտությունը, թող ձեր արյան կաթիլն էլ խառնվի այդ դրոշի սուրբ կարմրին»։

Պատիվները մեծ էին, բնականաբար մեծ էին նաև պարտավորությունները։ Բանասիրական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ Արսեն Տերտերյանը է՛լ ավելի մեծ եռանդով ձեռնամուխ եղավ մանկավարժական և գիտական-հայագիտական գործունեությանը։ Անխոնջ ջանքերը գտան իրենց լիուլի արդարացումը կադրեր աճեցնելու գործում։ Գրականագետների մի պատկառելի բանակ, որն այսօր իր ուսերին է տանում հայագիտության ամբողջ ծանրությունը, հանդիսանում են Արսեն Տերտերյանի սանիկները։ Նրանցից՝ ակադեմիկոսներ Մկրտիչ Մկրյանի,

Արշալույս Բաբայանի, Ռուբեն Զարյանի, Հովհաննես Ղանալանյանի, բանասիրական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Գուրգեն Անտոնյանի, բանասիրական գիտությունների դոկտոր Հրանտ Թամրազյանի, բանասիրական գիտությունների թեկնածուներ Սահակ Բազյանի, Գրիգոր Սարգսյանի, Ռուզաննա Նանումյանի, Մարգո Մխիթարյանի, Սարիբեկ Մանուկյանի, Գարեգին Գրիգորյանի, Ռաֆիկ Հարությունյանի և շատերի անունները վաղուց արդեն դուրս են եկել մեր հանրապետության սահմաններից։

Արսեն Տերտերյանի՝ այդ տարիներին հրատարակած մի շարք աշխատություններից («Հակոբ Պարոնյանի կյանքն ու գրական գործունեությունը», «Գրական ոճի պրոբլեմը», «Ծերենցը որպես վիպագիր», «Ռաֆֆու աշխարհայացքը», «Գրական ազդեցության պրոբլեմները», «Երվանդ Օտյանը որպես երգիծաբան», «Պուշկինը հայ գրականության մեջ») առավել ուշագրավ է «Խաչատուր Աբովյան» ծավալուն մենագրությունը, որը երևույթ դարձավ աբովյանագիտության մեջ։ Տարածվել և ընդհանրացվել էր այն կարծիքը, որ Աբովյանն ընդամենը գյուղագիր է, հայ նահապետական գյուղի և գյուղացու առօրյայի ճշգրիտ ու մանրամասն նկարագրող, և նրա ստեղծագործությունը իր մեկ-երկու դրական կողմերով հանդերձ, որոշակիորեն քիչ դեր ունի մեր գրականության զարգացման ընդհանուր շղթայում։ Տերտերյանն առաջին անգամ ցույց տվեց, որ Աբովյանով սկսվում և հիմնավորվում է հայ գրականության մի նոր ժամանակահատվածը՝ նոր գրականությունը և թեկուզ միայն այդ առումով Աբովյանի գործն անհասանելիորեն մեծ է։ Մանրակրկիտ կերպով քննելով նրա չափածո ստեղծագործությունը՝ Տերտերյանը բացահայտեց, որ Աբովյանը ինքնուրույն և յուրահատուկ մտածողություն ունեցող բանաստեղծ է, որն անվերապահորեն նոր խոսք է ասել հայրենի գրականության աղքատ անդաստանում։ Եվ վերջապես, քննելով նրա մանկավարժական գործունեությունը, Տերտերյանը վեր հանեց այն նորն ու առաջավորը, որ ներդրել է Աբովյանը մանկավարժության ասպարեզում։ Այս բոլորի հետևանքով էր, որ Տերտերյանի հիշյալ աշխատությունը առ այսօր մնում է լավագույններից մեկը, ինչ ասվել է Աբովյանի մասին։

Հայրենական պատերազմի ծանր տարիներին անգամ չթուլացավ Տերտերյանի դասախոսական և գիտական գործունեությունը։ Ավելի ուժեղացավ նաև Սովետական պետության ուշադրությունը դեպի հանրապետությունների գիտնականները և նրանց գործունեությունը։ Դա էր Լենինի պատգամը՝ գիտությունն ու գիտությունը կրող մարդիկ միշտ պետք է լինեն ուշադրության կենտրոնում։ Այս էր պատճառը, 1943 թվականին որոշվեց Հայաստանում բացել Գիտությունների ակադեմիա։ Ակադեմիկոս լինելու բարձր պատիվը 23 այլ անձանց հետ վիճակվեց նաև Արսեն Տերտերյանին։ 1943 թվականի նոյեմբերին նրան շնորհվեց հասարակական գիտությունների գծով ակադեմիայի իսկական անդամի պատվավոր տիտղոսը։

Այդ բարձր պատվին արժանանալուց մի քանի տարի անց՝ 1944 թ., Տերտերյանը հրատարակեց «Հայ կլասիկներ» խորագիրը կրող մոնումենտալ աշխատությունը, որն ասես, պատասխան էր պետության կողմից իրեն տրված մեծ պատվին։ «Հայ կլասիկները» դարձավ հայագիտության այն հավերժ չհնացող աշխատությունը, որը պարունակած անսպառ նյութի, գրականագիտական նոր ու նուրբ վերլուծությունների, տեսական լայն ընդհանրացումների շնորհիվ դարձել է գրականագետների սեղանի գիրքը։ Ի մի բերելով այն ամենը, ինչ արել է գիտական-քննադատական գործունեության քառասուն տարիների ընթացքում, Տերտերյանը ամբողջացված և առավել ճշտված ձևով ներկայացրեց հայ մշակութային գործիչներից ամենաբարդերի գրական-ստեղծագործական դիմանկարները։ Հայտնի է, օրինակ, որ Ալիշանը համարվում էր կաթոլիկ-կրոնական բանաստեղծ, հետևաբար այսօրվա համար ոչ մի արժեք չներկայացնող։ Տերտերյանը ցույց տվեց, որ Ալիշանը իր վառ հայրենասիրական բանաստեղծություններով ու արձակով հանդիսացել է հայ գրականության նոր շրջանի հիմնադիրներից մեկը, հետևաբար ունի իր անկապտելի տեղը։ Հայտնի է, որ Ռաֆֆին համարվում էր հայ նացիոնալիզմի ներկայացուցիչ ու պարագլուխ, հետևաբար՝ անընդունելի հեղինակ։ Տերտերյանը ցույց տվեց, որ Ռաֆֆին հայ ժողովրդի հայրենասիրական ոգորումների ամենաբարձր արտահայտիչն է, իսկ հայրենասիրությունը չի կարելի շփոթել նացիոնալիզմի հետ։ Պարոնյանագիտության մեջ նոր խոսք էր «Պարոնյանի գեղագիտական հայացքները» աշխատությունը՝

զետեղված «Հայ կլասիկներ»-ում, որտեղ Տերտերյանը իրեն բնորոշ լայն էրուդիցիայով վեր էր հանում մեծ երգիծաբանի ընկալումները գեղագիտության բնագավառում, և այլն։ Ակադեմիկոս Տերտերյանի «Հայ կլասիկները» այն աշխատություններից է, որի վրա դաստիարակվել ու դաստիարակվում են հայ գրականության նորանոր ներկայացուցիչները, իսկ այդ աշխատության հիմնարար դրույթներից շատերը ընկած են սովետահայ գրականագետների, տեսաբանների, գրականության պատմաբանների գործերի հիմքում։

Առաջացած տարիքը, լարված ու ծանր աշխատանքը, Համալսարանի գրականության ամբիոնի՝ լարում պահանջող գործունեությունը շուտով զգացնել տվեցին իրենց։ Երևանում և Մոսկվայում կատարած բուժումները չկարողացան կասեցնել հիվանդությունը և 1955 թ. հոկտեմբերին ակադեմիկոս Տերտերյանն արդեն չկար...

Ընկերների ջանքերով ու սատարմամբ հետմահու հրատարակվեցին նրա «Շիրվանզադեի տիպերի հանրագիտարանը» և «Պերճ Պռոշյան» աշխատությունները, որոնցում մեկ անգամ ևս փայլատակում է մեծ գիտնականն ու մտածողը, հատկանիշներ, որոնցով էլ նա ընդմիշտ մնաց ժամանակակիցների ու հաջորդների հիշողության մեջ։ «Տերտերյանը մեզ ներկայանում է բացարձակ իմաստով գրականագիտական մեծություն, – նրա մասին գրում էր Մանուկ Աբեղյանը, – բարձր էրուդիցիայի տեր մի պրոֆեսոր, որ միանգամայն ինքնուրույն ձևով ճշտումներ է մտցնում արվեստի այնպիսի տեսաբանների էսթետիկական որոշ սահմանափակումների մեջ, որպիսիք են Իպոլիտ Տենը, Ֆրիչեն, Բրանդեսը»։

Շատերի հիշողության մեջ այսօր էլ մնացել է արծվային հայացքով պարթևահասակ, տարիների իմաստությունն արտահայտող մի քիչ խոժոռ ու արտահայտիչ դեմքով այդ մարդու մտապատկերը, որ երեկոյան ժամերին հանդարտ ու հպարտ քայլվածքով սիրում էր ճեմել Աբովյան փողոցով։ Եվ նրան տեսնողները հարգալից պատկառանքով շշնջում էին. «Տերտերյանն է... Տերտերյանը...»

1982 թ.